Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

2024 թվականին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթների դիտարկման ամփոփում

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

2024 թվականին կազմակերպվել է Հակակոռուպցիոն կոմիտեում (այսուհետ՝ ՀԿԿ) ինքնավար պաշտոնների համալրելու նպատակով 4 մրցույթ, որից «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերության կողմից դիտարկվել են երեքը։ Չդիտարկված մրցույթին մասնակցել է մեկ թեկնածու՝ մեկ հաստիքի համար։

2024 թվականին անցկացրած մրցույթները սկզբունքորեն տարբերվել են նախորդիվ անցկացրած մրցույթներից, քանի որ առաջին անգամ կիրառվել է թեստավորման փուլի լրացուցիչ՝ բանավոր ենթափուլ։ Նման մոտեցումը ողջունելի է։ Այն թույլ է տվել թեկնածուների մասնագիտական գիտելիքների պատշաճ ստուգում իրականացնել, թեև արդյունքում մրցույթի հաղթահարման տոկոսը զգալիորեն նվազել է։

Դիտարկված ժամանակահատվածում Մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամներն են եղել՝

1. Հանձնաժողովի նախագահ՝ Մուշեղ Բաբայան՝ ՀԿԿ նախագահի տեղակալ
2. Արշալույս Մինասյան՝ ՀԿԿ ծառայող
3. Գարեգին Բեգոյան՝ ՀԿԿ ծառայող
4. Նաիրա Ճնգրյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ
5. Ռուզաննա Ավագիմյանը, Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ ներկայացուցիչ։

Մրցույթների մասին տեղեկությունները հրապարակվել են ինչպես ՀԿԿ պաշտոնական կայքում՝ anticorruption.am, այնպես էլ ՀԿԿ ֆեյսբուքյան էջում։

Բացի մրցույթի մասին հայտարարություններից և յուրաքանչյուր փուլի արդյունքների վերաբերյալ հրապարակումներից, պարբերաբար հրապարակվել են նաև թեկնածուների համար իրազեկումներ առ այն, որ ՀԿԿ ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների բարեվարքության ուսումնասիրության փուլում թեկնածուն իրավունք ունի մրցույթի հարցազրույցի /բարեվարքության/ փուլից առաջ դիմելու և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստանալու իր բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը[1]։

Ընդհանուր առմամբ, հայտարարված ոչ մի մրցույթում չեն համալրվել բոլոր թափուր հաստիքները։

Դիտարկված մրցույթները կազմակերպել են՝

[1] Տե՛ս, https://www.anticorruption.am/hy/job/teghekatvutyun-hh-hakakoruptsion-komitei-inknavar-yev-operativ-hetakhuzakan-gortsaruytner-irakanatsnogh-pashtonneri-hamalrman-npatakov-antskatsvogh-mrtsuytneri-barevarkutyan-puli-masin

- 2024թ.-ի հունվարի 4-ին հայտարարվել է թափուր հաստիքների համալրման համար մրցույթ, մրցույթի հարցազրույցի 2-րդ /բարեվարքության/ փուլը տեղի է ունեցել 2024 թ. ապրիլի 22-ին.
- 2024 թվականի մայիսի 23-ին հայտարարվել թափուր հաստիքների համալրման համար մրցույթ, իսկ մրցույթի հարցազրույցի 2-րդ /բարեվարքության/ փուլը տեղի է ունեցել 2024թ. օգոստոսի 23-ին.
- 2024 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարվել է թափուր հաստիքների համալրման համար մրցույթ, մրցույթի հարցազրույցի 2-րդ /բարեվարքության/ փուլն անց է կացվել 2025թ. հունվարի 20-ին։

Գծապատկեր 1. 2024 թվականին անցկացված ինքնավար հաստիքների համալրման նպատակով մրցույթների արդյունքները.



ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին, բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն հանրագումարային միավորը սահմանվում է 100-ը (հարյուրը)։

Մրցույթը բաղկացած է երկու փուլերից՝ թեստավորման և հարցազրույցի (բարեվարքության)։

2024 թվականինց Կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու նպատակով թեստավորման փուլն անցկացվում է երկու ենթափուլով՝

- ✓ թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի երեք տարբերակների միջոցով՝ յուրաքանչյուրը կազմված հարյուր հարցից, և
- ✓ տոմսերի հիման վրա բանավոր ստուգման միջոցով՝ յուրաքանչյուրը կազմված հինգ հարցից կամ խնդրից: Սովորաբար տոմսը պարունակում է երեք հարց ու երկու խնդիր՝ արարքի որակման և քրեադատավարական գործողություններին գնահատական տալու վերաբերյալ:

Թեստավորման փուլի համար ընդհանուր առավելագույն միավորը 50 է, որը ձևավորվում է թեստերով ստուգման ենթափուլի առավելագույն 40 միավորից և բանավոր ստուգման ենթափուլի առավելագույն 10 միավորից: Թեստի կատարման համար մրցույթի մասնակցին տրամադրվում է երեք ժամ 20 րոպե ժամանակ: Թեստավորումն անցկացվում է թեկնածուների համար ծածկագրի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով: Կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող թեստավորման հարցարանի յուրաքանչյուր հարցին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 0,4 միավոր: Թեստավորման փուլի անցողիկ միավոր է հայտարարության 21-րդ կետով սահմանված առավելագույն միավորի 70%-ը (յոթանասուն տոկոս), այսինքն՝ 35 միավորը, որից առնվազն 28 միավորը թեստավորման համար, իսկ առնվազն 7 միավորը բանավոր ստուգման համար:

Թեկնածուն բանավոր ստուգման տոմսն ընտրում է ինքնուրույն՝ պատահականության սկզբունքով: Ընտրված տոմսը փոխելն արգելվում է: Պատասխանին պատրաստվելու համար թեկնածուին տրվում է մինչև 30 րոպե ժամանակ: Բանավոր ստուգման տոմսի հինգ հարցերին կամ խնդիրներին պատասխանելուց հետո կամ ընթացքում հանձնաժողովի անդամները հավակնորդին կարող են տալ լրացուցիչ հարցեր: Բանավոր ստուգման ընթացքը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում է:

Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից թեկնածուին տրվող գնահատման առավելագույն միավորը յուրաքանչյուր հարցի կամ խնդրի համար 2-ն է: Թեկնածուի՝ բանավոր ստուգման արդյունքում ստացած միավոր է համարվում մրցութային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից յուրաքանչյուր հարցի կամ խնդրի համար տրված միավորների թվաբանական միջինների հանրագումարը:

Ըստ նոր կանոնների՝ թեստավորման հարցարանի և բանավոր ստուգման հարցերի 20 տոկոսը պետք է ներառեն Սահմանադրության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, վերաբերելի նախադեպային որոշումների, 20 տոկոսը՝ քրեական օրենսդրության, 20

տոկոսը՝ քրեական դատավարության օրենսդրության, 20 տոկոսը՝ գույքի բռնագանձման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտների օրենսդրության, 20 տոկոսը՝ հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտների իմացության ստուգմանն ուղղված հարցեր:

Բանավոր ենթափուլի հարցերը ենթադրում են հետևյալ իրավական ակտերի և նախադեպերի իմացություն՝
1) ՀՀ Սահմանադրությունը,
2) մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերը, վերաբերելի նախադեպային որոշումները,
3) ՀՀ քրեական օրենսգիրքը (05.05.2021թ.-ին ընդունված),
4) ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (30.06.2021թ.-ին ընդունված),
5) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գլուխ 5-ը,
6) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը,
7) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը,
8) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը,
9) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի գլուխ 11-ը, 12.1-ը:

Բանավոր ստուգման արդյունքները Հանձնաժողովն ամփոփում է նույն օրը՝ ամփոփաթերթում, որում արձանագրվում է յուրաքանչյուր մասնակցի ամփոփ գնահատականը (բալը): Բանավոր ստուգման արդյունքների ամփոփման հաջորդ օրը արդյունքները հրապարակվում են ՀԿԿ պաշտոնական կայքում:

Բարեվարքության հարցազրույցի շրջանակներում ստուգվում են թեկնածուի անձնական որակները և մոտեցումները, ինչպես նաև պարզաբանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԿՀ) կողմից տրված բարեվարքության վերաբերյալ եզրակացության մեջ նշված մտահոգությունները և խնդիրները:

Հարցազրույցի (բարեվարքության) փուլի համար առավելագույն միավորը 50 է, որը բաշխվում է ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների՝ հետևյալ համամասնությամբ՝
1) անձնական որակներ՝ 15 միավոր,
2) բարեվարքություն՝ 29 միավոր,

3) պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ աշխատանքային ձեռքբերումներ՝ 6 միավոր։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԲՈԼՈՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Բանավոր ենթափուլին բոլոր թեկնածուները՝ իրենց ընտրությամբ քաշած տոմսի հիման վրա պատասխանել են հինգ հարցի՝ վերը նշված ոլորտներից։ Հանձնաժողովի անդամները թեկնածուի գնահատումը իրականացրել են առանձին՝ յուրաքանչյուր թեկնածուի համար հատկացված անհատական թերթիկներում, իսկ արդյունքներն ամփոփելուց հետո թեկնածուն ստացել է միջինացված միավոր։

Բանավոր ենթափուլի շրջանակներում ընդհանուր առմամբ թեկնածուները առավել դժվարացել են պատասխանել մարդու իրավունքների և ՀՀ Սահմանադրությանը վերաբերող հարցերին, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և իրավաբանական անձանց գործունեությանն առնչվող հարցերին։

Բացի այդ, արձանագրվել է, որ անգամ քննիչի ստաժ ունեցող թեկնածուները համապարփակ գիտելիք չունեն քրեադատավարական կարգավորումներից կամ չեն կարողանում պատշաճ որակել արարքը՝ ըստ նոր Քրեական օրենսգրքի։ Նշված բացը նկատելի է իրավիճակային հիփոթետիկ խնդիրները լուծելիս։

Ստորև ներկայացված պատկերից ակնհայտ երևում է, որ թեկնածուների զգալի մեծը չի հաղթահարում բանավոր փուլը, այսինքն՝ չի կարողանում պատշաճ պատասխանել մասնագիտական և իրավական գիտելիք պահանջող հարցերին։



Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բարեվարքության ուսումնասիրության փուլ՝ Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների

բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով։

Դիտարկված մրցույթների համատեքստում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության եզրակացությունը տրամադրվել է Հակակոռուօցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքով սահմանված վերջնաժամկետից զգալիորեն ավելի ուշ։ Այս խնդիրը բնորոշ է անցկացրած բոլոր մրցույթներին։ Նշվածը բացասական ազդեցություն է ունեցել մրցույթի կազմակերպման տևողության և հաստիքների համալրման հարցում։

Բարեվարքության ստուգման փուլում թեկնածուներին ուղղվել են ինչպես ՀԿԿ գործունեության, կոռուպցիայի հանդեպ վերաբերմունքի, այնպես էլ թիմային աշխատանքի, նախաձեռնողականության, վերադասին առարկելու ունակության, աշխատանքում առաջնահերթություններ սահմանելու, նոր միջավայրում ընտելանալու, ինչպես նաև սթրեսը հաղթահարելու վերաբերյալ հարցեր։

Հարցեր են ուղղվել նաև թեկնածուի գործողությունների վերաբերյալ այն դեպքում, երբ տեղեկանում է հարազատի կամ գործընկերոջ կողմից հանցագործություն, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի կատարելու մասին։

Հանձնաժողովը առանձնակի ուշադրություն է դարձրել թեկնածուների կարգապահական և քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հարցերին, ինչպես նաև վարչական տույժերի առկայությանը։ Այն դեպքերում, երբ կարգապահական տույժի նշանակման հետ թեկնածուն, իր պնդմամբ, համաձայն չի եղել, Հանձնաժողովը հայցել է պարզաբանումներ տույժը չբողոքարկելու պատճառների մասին։

Արցախից թեկնածուներից ոմանց հարցրել են, թե արդյոք նրանք մասնակցել են հավաքներին։ Նման հարց չի հնչել մնացած թեկնածուների դեպքում։ Նշված հարցադրումը ազդարարում է ծագմամբ պայմանավորված քաղաքական հայացքներ ունենալու վերաբերյալ առկա կարծրատիպերի մասին։

Իգական սեռի թեկնածուներին ուղղված որոշ հարցեր ունեցել են հստակ՝ գենդերային դերերով պայմանավորված ենթատեքստ։ Օրինակ՝ արդյո՞ք իգական սեռի թեկնածուն ունի դաջվածք կամ պատրաստվում է ունենալ։ Նման հարցադրում չի արվել արական սեռի որևէ թեկնածուին։

Ընդհանուր առմամբ՝ Հանձնաժողովի անդամների՝ հարց տալու ակտիվությունը էականորեն տարբերվել է։ Հարցերի մեծամասնությունը ուղղվել է Հանձնաժողովի նախագահի կողմից։ Բարեվարքության փուլում սովորաբար սկզբնական հարցերը

տվել է Հանձնաժողովի մեկ այլ անդամ՝ միշտ ՀԿԿ ներկայացուցիչ: ՀԿԿ ծառայող չհանդիսացող Հանձնաժողովի անդամները հարցեր տվել են միայն որոշ թեկնածուների դեպքում:

Բոլոր մրցույթներին բնորոշ մեկ այլ խնդիր կայանում է նրանում, որ անկախ հաստիքից՝ քննիչից մինչև նախագահի տեղակալ, թեստավորման փուլում՝ իր երկու ենթափուլերով թեկնածուները պատասխանում են նույն հարցերին: Այսինքն՝ որևէ տարբերակված մոտեցում նախատեսված չէ: Նշված խնդիրը Կազմակերպության կողմից արձանագրվել է նաև 2023 թվականին անցկացված մրցույթների համատեքստում[2]:

Բացի այդ, մրցույթները հիմնականում անց են կացվում մի քանի հաստիքի համալրման համար: Իսկ դիտարկման ժամանակ հասկանալի չէ, թե որ հաստիքի համար է դիմել թեկնածուն, քանի որ այդ տեղեկությունը չի հրապարակայնացվում:

Ընդհանուր առմամբ պետք է արձանագրել, որ մրցույթներին մասնակցող անձանց թիվը նվազում է, թափուր հաստիքների համար գրեթե չի լինում մրցակցություն:

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ

2024թ.-ի հունվարի 4-ին հայտարարվել էր մրցույթ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝

- հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 8,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 2,
- ավագ քննիչի՝ 5,
- քննիչի՝ 4 թեկնածուների ընտրության համար[3]:

➢ Մրցույթի թեստավորման փուլի գրավոր ենթափուլը

Մրցույթի գրավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի փետրվարի 12-ին: Թեկնածուների քանակը և քննասենյակի տարողականությունը հաշվի առնելով՝ թեստավորումը կազմակերպվել է երկու խմբերով՝ նույն օրը:

[2] https://prwb.am/2024/12/03/zekuyc%e2%80%a4-hakakorupcion-komitei-2023th%e2%80%a4-gortcuneuthyan-usumnasiruthyun/
[3] https://www.anticorruption.am/hy/announcement/view/243

Թեկնածուների զգալի մասը Արցախից էին։

19 հաստիքի համար դիմած թեստավորման մասնակցած 24 թեկնածուներից (որոնցից 5-ը (21%)՝ կին) 18-ը (75%) հաղթահարել է գրավոր ենթափուլը[4]։

- Մրցույթի թեստավորման փուլի բանավոր ենթափուլը

Բանավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի փետրվարի 15-ին և 16-ին։ Արդյունքում 18 թեկնածուներից 13-ը (72%), որից 3-ը՝ կին (23%), հաղթահարել են բանավոր ենթափուլը՝ ստանալով անցողիկ շեմն ապահովող 7 միավորը[5]։ Թեկնածուներից մեկը չէր ներկայացել։

Բանավոր փուլի ընթացքում թեկնածուի հարցման միջինացված տևողությունը կազմել է շուրջ 19 րոպե։ Հարցազրույցը տևել է առավելագույնը 40, իսկ նվազագույնը՝ 5 րոպե։ Ընդ որում՝ 5 րոպե տևողությամբ հարցազրույցը, որի ընթացքում թեկնածուն պատասխանել է հինգ հարցերի, ՀԿԿ աշխատակից հանդիսացող թեկնածուի հարցազրույցն էր։ Հատկանշական է, որ առաջին օրը մրցույթին մասնակցած թեկնածուների հարցումը տևել է ավելի երկար, քան երկրորդ օրը։ Այդպես, առաջին օրվա թեկնածուները հարցերին պատասխանել են 16-ից մինչև 40 րոպե /միջինում՝ 26 րոպե/, իսկ երկրորդ օրը՝ 5 րոպեից մինչև 18 /միջինում՝ 12 րոպե/։

Բանավոր ենթափուլի անցկացման առաջին օրը Հանձնաժողովի բոլոր անդամները ներկա էին, իսկ երկորդ օրը բացակայում էր քաղաքացիական հասարակության կազմակերպություն ներկայացնող Ռ.Ավագիմյանը։ Հանձնաժողովի անդամներից առավելագույնը երեքն են նույն թեկնածուին հարցեր տվել։ Որոշ թեկնածուների դեպքում Հանձնաժողովի կողմից որևէ լրացուցիչ հարց չի տրվել։

- Մրցույթի հարցազրույցի փուլը /բարեվարքության ստուգում/

Մրցույթի հարցազրույցի փուլը տեղի է ունեցել 2024 թ. ապրիլի 22-ին։ Ինչպես տեսնում ենք, այն կազմակերպվել է բանավոր փուլից երկու ամիս անց, քանի որ ԿԿՀ կողմից տրվող բարեվարքության եզրակացությունը տրամադրվել է Օրենքով սահմանված վերջնաժամկետից զգալիորեն ավելի ուշ։ Այս խնդիրը բնորոշ է մշտադիտարկման ժամանակահատվածում անցկացրած բոլոր մրցույթներին։

Հարցազրույցի փուլին ներկա էին Հանձնաժողովի հինգ անդամներից միայն երեքը՝ բոլորը ՀԿԿ ներկայացուցիչներ են[6]։

---

[4] https://www.facebook.com/share/p/16nDhTr4EE/

[5] https://www.facebook.com/share/p/16kh5o52rX/

[6] Հանձնաժողովի մեկ անդամ չէր մասնակցում այլ հանձնարարությունների կատարմամբ պայմանավորված, իսկ երկրորդը՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով։ Վերջիններիս բացակայությունը դիտարկվել է հարգելի։

Կարգի համաձայն՝ հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր հոգեբան Մարինե Սահակյանը։

Մրցույթի ինքնավար պաշտոնների 13 թեկնածուներից 10-ը (77%) հաղթահարել են հարցազրույցի փուլի անցողիկ շեմը՝ 35 միավորը։ Մրցույթը հաղթահարած թեկնածուների միջինացված միավորը կազմել է 40.3, առավելագույնը՝ 41.7 միավոր, նվազագույնը՝ 38.8։

Բոլոր թեկնածուները ունեցել են որպես քննիչ, հետաքննիչ և/կամ դատախազ աշխատելու փորձ։

Թեկնածուի գործողությունների վերաբերյալ հարցին այն դեպքում, երբ տեղեկանում է հարազատի կամ գործընկոջ կողմից կոռուպցիոն հանցագործություն կատարելու մասին նման հարց ստացած 9-ը թեկնածուներից 8-ը պնդել են, որ միանշանակ կզեկուցեն վերադասին՝ հիմնականում գրավոր, իսկ 1-ը դժվարացել է պատասխանել։

Հանձնաժողովը առանձնակի ուշադրություն է դարձրել թեկնածուների կարգապահական և քրեական պատասխանատվության ենթարկվելու հարցերին։ Այդպես, թեկնածուներից մեկը տարիներ առաջ որպես քննիչ աշխատելու ժամանակ անցել է պաշտոնական կեղծիք կատարելու գործով, սակայն քրեական հետապնդումը կարճվել է։ Թեև այդ հիմքով քրեական հետապնդման կարճվելը խոչընդոտ չէ ՀԿԿ դիմելու համար, այնուամենայնիվ, Հանձնաժողովը դա խնդրահարույց է համարել՝ հաշվի առնելով փաստական հանգամանքները։

Բացի այդ, անհատապես քննարկվել են ԿԿՀ կողմից բարեվարքության ստուգման արդյունքում բացահայտված խնդիրները։ Նշված խնդիրներից առավել հաճախակի արձանագրվել է բանկային հաշվին տարվա վերջին և հաջորդ տարվա սկզբին մնացորդի միջև տարբերություն այն դեպքում, երբ տվյալը պետք է լրացվեր դեկտեմբերի 31-ի և դրան հաջորդող հունվարի 1-ի վերաբերյալ։ Նման խնդիր ծագել է, քանի որ թեկնածուները հայտարարագիրը լրացրել են Օրենքով սահմանված ժամկետում՝ մինչև մայիս ամիսը, և որոշները նշել են լրացման պահին մնացորդը։ «Չորս տարի այդպես եմ լրացրել, մեկը չի ասել, որ սխալ է»։ Որոշ թեկնածուներ չեն նշել իրենց պատկանող գույքը՝ վերագրելով այն տեխնիկական պատճառների կամ, օրինակ, տրանսպորտային միջոցի խոտանված լինելու հանգամանքին։ Որոշ թեկնածուների դեպքում արձանագրվել են տրանսպորտային միջոցների առքի ու վաճառքի, դրանից ստացված եկամտի հայտարարագրման խնդիրներ։ Նշված խնդիրներից մեկը առուվաճառքի հանգամանքը հայտարարագրի մի բաժնում նշելը, իսկ եկամուտների բաժնում՝ ոչ։

Թեկնածուներից ոմանք ունեցել են բազմաթիվ վարչական տույժեր՝ տրանսպորտային միջոցը վարելիս արագությունը գերազանցելու, կայանման կանոնները խախտելու և այլ իրավախախտումների համար։ Հատկապես կայանման հետ կապված տույժերի առկայությունը իրավապահ մարմիններում ծառայող թեկնածուները բացատրել են ծառայողական անհրաժեշտությամբ և հատկապես Կենտրոն վարչական շրջանում կայանման վայրերի սակավությամբ։

Որոշ թեկնածուներ խոշոր չափի կանխիկ գումար են հայտարարագրել։ Կանխիկով գումար պահելը բացատրել են բանկերին չվստահելու կամ հրատապ ծախսեր հոգալու անհրաժեշտությամբ, այդ թվում՝ բժշկական ծառայությունների համար վճարելու նպատակով։ Կանխիկով խոշոր գումար հայտարարագրելը Հանձնաժողովը դիտարկել է որպես կոռուպցիոն ռիսկեր պարունակող և խնդրահարույց՝ հանրային ծառայողի հաշվետողականության տեսանկյունից։ Թեկնածուները չեն կարողացել ողջամիտ պատասխան տալ Հանձնաժողովի մեկնաբանությանն ի պատասխան առ այն, որ օրենսդրությամբ բժշկական ծախսերը կամ որոշակի գումարից ավել ապրանքների գնման դեպքում վճարումը պարտադիր պետք է իրականացվի անկանխիկ եղանակով։

Մրցույթը չհաղթահարած բոլոր երեք թեկնածուների վերաբերյալ ԿԿՀ կողմից տրված բարեվարքության եզրակացությունը բացասական էր։ Հատկանշական է, որ նշված թեկնածուներից մեկը նախկինում կրկին չէր հաղթահարել բարեվարքության հարցազրույցի փուլը՝ բացասական եզրակացություն ունենալու պատճառով։

Մրցույթը հաղթահարած թեկնածուներից բոլորը ունեցել են բարեվարքության դրական եզրակացություն։

Ինչպես տեսնում ենք, թեև ՀԿԿ-ն հայտարարել էր 19 հաստիքի համալրման մրցույթ, միայն 10 թեկնածու է հաղթահարել մրցույթը։ Ուստի այս մրցույթի արդյունքներով ոչ բոլոր հաստիքներն են համալրվել։

Գծապատկեր 2. Մրցույթի թեկնածուների թիվը՝ ըստ փուլերի

ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնի՝ ներքին անվտանգության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1 թեկնածուի (այսուհետ՝ թեկնածու) ընտրության համար հայտարարել է մրցույթ: Նշված մրցույթը չի դիտարկվել:

ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ

2024 թվականի մայիսի 23-ին հայտարարվել է նոր մրցույթ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝

- հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 3,
- հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1,
- ավագ քննիչի՝ 5,
- քննիչի՝ 2 թեկնածուների ընտրության համար[7]:

➢ Մրցույթի թեստավորման փուլի գրավոր ենթափուլը

Մրցույթի գրավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի հուլիսի 2-ին:

11 հաստիքի համար գրավոր ենթափուլին մասնակցած 16 թեկնածուներից 11-ը (69%) հաղթահարել են նշված ենթափուլի անցողիկ շեմը՝ 28 միավորը:

➢ Մրցույթի թեստավորման փուլի բանավոր ենթափուլը

Մրցույթի բանավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի հուլիսի 4-ին: Մրցույթին ներկա են եղել Հանձնաժողովի չորս անդամներ, բացակայում էր ՀԿԿ ծառայող Գ.Բեգոյանը:

[7] https://www.facebook.com/share/p/1Cc3j5isKo/

Բանավոր փուլի ընթացքում թեկնածուի հարցման միջինացված տևողությունը կազմել է շուրջ 26 րոպե: Ընդ որում՝ հարցազրույցը տևել է առավելագույնը 51, իսկ նվազագույնը՝ 10 րոպե: Ընդ որում, ՀԿԿ-ում այդ պահին որոշակի պաշտոն զբաղեցնող թեկնածուի հարցազրույցն է տևել 10 րոպե:

10 թեկնածուներից[8] միայն 3-ն (30%) են հաղթահարել անցողիկ շեմը, երեքն թեկնածուներն էլ իգական սեռի ներկայացուցիչ են[9]:

- Մրցույթի հարցազրույց փուլը /բարեվարքության ստուգում/

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի 2-րդ /բարեվարքության/ փուլն անցկացվել է 2024թ. օգոստոսի 23-ին:

Ներկա էին Հանձնաժողովի միայն երեք անդամներ, բոլորը՝ ՀԿԿ ներկայացուցիչ: Կարգի համաձայն՝ հարցազրույցին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր հոգեբան Մարինե Սահակյանը:

Մրցույթի ինքնավար պաշտոնների 3 կին թեկնածուներն էլ հաղթահարել են հարցազրույցի փուլի անցողիկ շեմը՝ 35 միավորը: Մրցույթը հաղթահարած թեկնածուների միջինացված միավորը կազմել է 38.4, առավելագույնը՝ 39 միավոր է, նվազագույնը՝ 37.67:

Ինչպես և նախորդող մրցույթների ժամանակ, թեկնածուներին ուղղվել են հարցեր ՀԿԿ գործունեության, կոռուպցիայի հանդեմ վերաբերմունքի, թեկնածուի կարծիքով՝ քննիչի համար առավել կարևոր բնավորության գծերի, այնպես էլ թիմային աշխատանքի, նախաձեռնողականության, աշխատանքում առաջնահերթությունների սահմանման սկզբունքի, նոր միջավարվում ընտելանալու, սթրեսը հաղթահարելու, սեփական զգացմունքները կառավարելու ունակության վերաբերյալ հարցեր:

Հատկանշական է, որ իգական սեռի ներկայացուցիչ թեկնածուներին ուղղվել են հարցեր, որոնք չեն ուղղվում արական սեռի թեկնածուներին: Օրինակ՝ արդյո՞ք թեկնածուն ունի դաջվածք կամ պատրաստվում է ունենալ:

Ինչպես և նախորդիվ, մրցույթի արդյունքներով ոչ բոլոր հաստիքներն են համալրվել: ՀԿԿ-ն հայտարարել էր 11 հաստիքի համալրման մրցույթի շեմը հաղթահարել են միայն երեք թեկնածուներ:

[8] Մեկ թեկնածու հրաժարվել է մասնակցել մրցույթին, քանի որ Քննչական կոմիտեում անցել է ծառայության:
[9] https://www.facebook.com/share/p/16qaPKB9aW/

Գծապատկեր 3. Մրցույթի թեկնածուների թիվը՝ ըստ փուլերի

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ

2024 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարվել է նոր մրցույթ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների՝

- Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի՝ 4
- Հատկապես կարևոր գործերով քննիչի՝ 1
- Ավագ քննիչի՝ 4 թեկնածուների ընտրության համար[10]:

➢ Մրցույթի թեստավորման փուլի գրավոր ենթափուլը

Մրցույթի գրավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի հոկտեմբերի 14-ին:

9 հաստիքի համար դիմած և գրավոր ենթափուլին մասնակցած 12 թեկնածուներից 11-ը (92%) հաղթահարել են նշված ենթափուլի անցողիկ շեմը՝ 28 միավորը[11]: Բոլոր թեկնածուները արական սեռի ներկայացուցիչ են:

➢ Մրցույթի թեստավորման փուլի բանավոր ենթափուլը

Մրցույթի բանավոր ենթափուլը տեղի է ունեցել 2024 թվականի հոկտեմբերի 16-ին: Մրցույթին ներկա են եղել Հանձնաժողովի չորս անդամներ, բացակայում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչ Ն.Ճանկրյանը: Թեստավորման փուլի բանավոր ստուգման ենթափուլը 11 թեկնածուներից հաղթահարել են միայն 2-ը (18%)[12]:

[10] https://www.anticorruption.am/hy/announcement/view/287
[11] https://www.anticorruption.am/hy/announcement/view/301
[12] https://www.anticorruption.am/hy/announcement/view/302

Առավելապես խնդիր էր նկատվում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և իրավաբանական անձանց գործունեության վերաբերյալ հարցերին պատասխանելու կարողության առումով:

Որոշ դեպքերում նույն թեկնածուն դիմել է ՀԿԿ մի քանի մրցույթի, սակայն չի հաղթահարել շեմը: Միևնույն ժամանակ բանավոր ենթափուլին կրկին խորությամբ չի պատրաստվել:

- Մրցույթի հարցազրույց փուլը /բարեվարքության ստուգում/

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցի 2-րդ /բարեվարքության/ փուլն անց է կացվել 2025թ. հունվարի 20-ին:

Հարցազրույցի (բարեվարքության) փուլին մասնակցած 2 թեկնածուներից, երկուսն էլ արական սեռի, միայն մեկն է հաղթահարել հարցազրույցի (բարեվարքության) փուլի անցողիկ շեմը՝ 35 միավորը (որից առնվազն 22 միավորը բարեվարքության համար)՝ ստանալով 37,2 միավոր:

Գծապատկեր 4. Մրցույթի թեկնածուների թիվը՝ ըստ փուլերի



Ընդհանուր առմամբ, արձանագրվել է, որ նվազում է ոչ միայն մրցույթներին մասնակցող թեկնածուների թիվը, այլ նաև մրցույթը հաղթահարած թեկնածուների միջինացված միավորը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարձրագույն հաստիքների համալրման համար սահմանել այլ հարցաշար, առնվազն թեստավորման փուլի բանավոր ենթափուլի համար՝ ապահովելու

հայցվող պաշտոնին համապատասխան գիտելիքների ստուգման հնարավորություն։

- Թեստավորման փուլի բանավոր ենթափուլին և բարեվարքության հարցազրույցի ժամանակ նշել թեկնածուի կողմից հայցվող հաստիքը։
- Հարցադրումներ տալ նաև թեկնածուի անհաջողությունների, առավել խնդրահարույց դեպքերի մասին ևս՝ գնահատելու թեկնածուի անձնական պատասխանատվություն ստանձնելու և սխալների վրա սովորելու կարողությունը։
- Բացառել գենդերային կարծրատիպերով պայմանավորված հարցադրումներ կամ մեկնաբանություններ։